

ՀՈՒԼԻՍ-2014

ՆՅՈՒԹԵՐՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԴԻՏԵԼ ՎԵՐԱԳՐԻ ՎՐԱ ՍԵՂՄԵԼՈՎ



Վարդավառի Մրգավանի Սուրբ Զակոբ եկեղեցու բակում 31.07.2014

Հուլիսի 29-ին, Մրգավանի Սուրբ Զակոբ եկեղեցու բակում կատարվեց Վարդավառի տոնակատարությունը: Միջոցառմանը ներկա էին մարզպետի տեղակալ Իլիչ Շադյանը, մարզպետարանի աշխատակազմի մշակույթի բաժնի վարիչ Կարինե Հովհաննիսյանը, գլխավոր մասնագետ Սեյրան Նազարյանը: Միջոցառումը սկսեց Տեր Արարատ քահանա Օրդյանը Տերունական աղոթքով, ապա բացատրեց տոնի խորհուրդը Աստվածաշնչյան մեկնությամբ: Այնուհետև, ‘Արտաշատ’ պարի համույթը ղեկավար Զակոբ Մովսիսյանի գլխավորությամբ սկսեց տոնական միջոցառումը՝ ‘Հալել եմ եղը’ երգով ու...



ՆՈՐԱԲԱՑ ԶԱՄԱՅՆՔԻ ԵՎԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ 29.07.2014

Հիսուսի Պայծառակերպության նախօրյակին՝ հուլիսի 26-ին, Արարատի մարզի Նորաբաց համայնքում Արարատյան Հայրապետական թեմի հոգևոր առաջնորդ Տեր Նավասարդ Կճոյանի ձեռամբ օծվեց Նորաբացի Սուրբ Աստվածածին եկեղեցին: Օծման արարողությանը մասնակցում էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչներ, Արարատի մարզպետ Ռուբին Աբրահամյանը, ԱԺ պատգամավորներ Մուրադ Մուրադյանը, Արայիկ Գրիգորյանը, Կարինե Պողոսյանը, այլ պաշտոնատար անձինք, հավատավոր ժողովուրդը, ինչպես նաև հյուրեր ՌԴ-ից: ...



Հանգիստն ավարտվեց 3-րդ փուլով 29.07.2014

Հուլիսի 28-ին Արարատի մարզի 125 երեխաներ 3-րդ՝ վերջին փուլով մեկնեցին Հանքավանի «Հեքիաթային կիրճ» մանկական առողջարարական ճամբարում հանգստանալու: Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանն այս անգամ ևս երեխաներին ապահովեց հիգիենիկ պարագաներով և, դիմելով ծնողներին ասաց, որ շնորհակալ է հայրենի կառավարությունից՝ երեխաների հանգիստը ամառային ճամբարներում կազմակերպելու համար ևս ընդգծեց, որ շնորհիվ կառավարության և քաղաքացիների աջակցության այս տարի միայն Արարատի մարզից 345...



Բակային ճամբարի պաշտոնական բացումը 21.07.2014

Հուլիսի 18-ին, Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը՝ մարզպետի տեղական Իլյիչ Շադյանի, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏ վարչության պետ Ալինա Լալայանի, մարզպետի օգնական Նարեկ Ասլանյանի ուղեկցությամբ մասնակցեց Բուրաստան համայնքի բակային ճամբարի պաշտոնական բացմանը: Երեխաները գյուղապետարանի մուտքի մոտ մարզպետին դիմավորցին հասկերի փնջերով, իսկ պարի համույթն սպիտակ սավանով ստեղծեց Արարատ լեռան պատկերը: Հնչեց ՀՀ օրհներգը, ձայնակցեցին բոլոր ճամբարականներն ու ծնողները: Ապա, գյուղապետ Աշոտ...



Մարզպետի այցն ամառային ճամբար 14.07.2014

Հուլիսի 12-ին, Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, մարզպետարանի սոցապահովության բաժնի պետ Գեղամ Միրզոյանի և ֆին. և սոցտնտեսական զարգացման վարչության պետ Կարեն Եղիազարյանի հետ այցելեց Հանքավանի 'Հեքիաթային կիրճ' մանկական առողջարարական ճամբար: Այցի նպատակն էր՝ մոտիկից ծանոթանալ երեխաների ճամբարային առօրյային, տեսնել թե ինչպես են հանգստանում նրանք: Բնականաբար, մարզպետ Ռուբիկ Աբրահամյանն իր հետ ճամբար էր տարել նաեւ Արարատի մարզի բերք ու բարիքից: Մարզպետի այցը խիստ...



Հացահատիկի առատ բերք 11.07.2014

Այս օրերին, երբ մարզում ընթանում է հացահատիկի բերքահավաքը, Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանն, ով անձամբ է հետևում բերքահավաքի ընթացքին, այսօր հերթական այցը կատարեց Բուրաստան համայնք: Հիշյալ համայնքի ցորենի 11 հա-ը գտնվում է Արաքսամերձ հատվածում: Մարզպետը գրուցեց գյուղացիների, կոմբայնավարների, համայնքի ղեկավարի հետ: Չրույցի ընթացքում գյուղացիներն իրենց շնորհակալությունը հայտնեցին մարզպետին, կառավարության՝ ցուցաբերցած օգնության համար: Բարձրորակ սերմացուն, ազոտական, ֆոսֆորական և...



Ամառային հանգստի երկրորդ փուլը 09.07.2014

Այսօր՝ հուլիսի 9-ին, Արարատի մարզի սոցիալապես անապահով ընտանիքների 125 երեխաներ երկրորդ փուլով մեկնեցին հանգստի: Նրանք 20 օր կանցկացնեն Հանքավանի ‘Հեքիաթային կիրճ’ մանկական առողջարարական ճամբարում: Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, համապատասխան ստորաբաժանումների աշխատողների ուղեկցությամբ, երեխաներին ճանապարհելուց առաջ զրուցեց երեխաների եւ նրանց ծնողների հետ: Նա ասաց, որ տեղական լրատվամիջոցների հետ ինքը կայցելի ճամբար՝ մոտիկից ծանոթանալու երեխաների ճամբարային առօրյային: Մարզպետն այս...



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶՆՆԱՐԿՈՒՄ 03.07.2014

Շարունակվում են սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին նվիրված հանրային քննարկումների մարզային փուլը, որն այսօր տեղի ունեցավ Արտաշատ քաղաքում: Հանդիպումը կայացավ Ար արատ ի մարզպետարանում, որտեղ ներկա էին մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, մարզպետարանի բարձրաստիճան պաշտոնյաներ, տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչներ, լրագրողներ քաղաքացիներ: Բանախոսներն էին նախագահին կից սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ Հրայր թովմասյանն ու Գրիգոր Մուրադյանը:...



Յերթական խորհրդակցությունը տոնական էր 02.07.2014

Այսօր Արարատի մարզպետարանում բժիշկների հերթական աշխատանքային խորհրդակցությունը Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը վերածեց տոնի: Նա շնորհավորեց բժիշկներին, բուժաշխատողներին մասնագիտական տոնի կապակցությամբ և ասաց, որ ոչ թե անուշադրության է մատնել նրանց, այլ որոշել է համատեղել խորհրդակցությունն ու տոնը՝ ինայելով բժիշկների ժամանակը: Մասնագիտական տոնի կապակցությամբ մարզի 12 բժիշկներ՝ առողջապահության համակարգում բարեխիղճ և անմնացորդ աշխատանքի, ինչպես նաև ՀՀ բուժաշխատողի օրվա...



ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԵՂԱՐՁԸ 01.07.2014

Հուլիսի 1-ին Արարատի մարզի Շահումյան համայնքը նշեց արվեստի դպրոցի 15-ամյակը: Հանդիսությանը ներկա էին Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, կոնսերվատորիայի պրոֆեսոր Անժելա Աթաբեկյանը, մշակույթի գործիչներ, համայնքի...